

րանի՝ այս նշխարքն ալ պիտի փճանար՝ այն հազար ու մէկ եղանակներով, որոնց ենթարկուած են Լբուած գրքեր ու գրադարաններ:

Հետաքրքրական է նաեւ գիտնալ թէ Տն-ն-ի-ոց Սե-ն-ի-ը ինչ վիճակի մէջ էր երբ անձնատուր եղաւ նոր Մատենադարանի մը պէտքերուն առջեւ:

Կոլտի, ըսենք նաեւ Նալեանի Մատենադարանը եւ այդ Մատենադարանի գրքերուն վրայ կարգացուած 601 թիւը՝ նախանձեղի ճոխութեան

1 Մայր-Եկեղեցւոյ երէցներէն Տ. Միքայէլ քհնյ. Ալճեանի տուած տեղեկութեան համեմատ՝ 1616 կտոր ձեռագիր եւ տպագիր գրքեր գտնուած են Տն-ն-ի-ոց Լե-ն-ի-ն (= Թանգարանին) մէջ: Շատ մը ընկերութիւններ կազմուած են 1858—59ին, Տաճարեան, Հայկեան, Խնայողական, Լուսաւորական, Երեւնից, Ուսումնասիրաց, Ընթերցասիրաց անուններով: Կ'երեւայ թէ այս ընկերութիւնները հետզհետէ կամ ժամանակցաբար ձեռք առած են Տն-ն-ի-ոց Սե-ն-ի-ը. վասն զի իբր այդ ցրուած ընկերութեանց սեփական գոյքեր ու գրքեր Կոլտի Մատենադարանը կը մնայ այդ ընկերութեանց ներկայացուցիչ եւ Թղին. Խորհրդոյ անդամ ժամակոչեան Պօղոսի քով: Այս անձը 1873 Ապրիլ 22ին Թղին. Խորհրդոյ կը յանձնէ Կոլտի Մատենադարանին նշխարքը, հետեւեալ ցանկով, ուր կը տեսնենք թէ կտոր կտոր եղած է ֆակիւթ Մատենադարանը այս կամ այն ընկերութեան հաշուին:

Ձեռագիր հայերէն, թրքերէն	հարոր	360
Տպագիր հայերէն	»	698
» » Ընթերց. ընկերութեան	»	120
» » Լուսորդ. ընկ.	»	138
» օտար լեզուներով, ընթերցասիրաց ընկ. եւ Մայր-Վարժարանի	»	300
		1616

Այս հաշուր Լեյհ-բե-բ Գոմից կտոր գրքերուն մէջէն Մայր-Վարժարանի գրքերը վար կը դուռին եւ մնացածները կը յանձնուին Ազգ. Մատենադարանի՝ Թղի. Խորհրդոյ Ատենապետ Քիւրքճիպաշեան Բարթողի առաջարկութեամբ 1878 Մարտ 20ին: